ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2019-2021թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (փետրվար ամսվա վերջի դրությամբ)









2021թ. փետրվարի 28-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4,605.59 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.6%-ով, 2020թ.փետրվարի 29-ի նկատմամբ՝ 30.9%-ով և 2019թ.փետրվարի 28-ի նկատմամբ՝ 35.6%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4,341.21 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.6%-ով, 2020թ.փետրվարի 29-ի նկատմամբ՝ 32.1%-ով և 2019թ.փետրվարի 28-ի նկատմամբ՝ 38.8%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 264.38 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 9.99%-ով, 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ՝ 13.84%-ով, իսկ 2019թ.փետրվարի 28-ի նկատմամբ՝ նվազելով 1.78%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 8,723.37 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 9.5%-ով, 2020թ.փետրվարի 29-ի նկատմամբ՝ 18.7%-ով և 2019թ.փետրվարի 28-ի նկատմամբ՝ 25.7%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 8,222.61 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 9.5%-ով, 2020թ.փետրվարի 29-ի նկատմամբ՝ 19.8%-ով և 2019թ.փետրվարի 28-ի նկատմամբ՝ 28.6%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 500.76 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.87%-ով, 2020թ.փետրվարի 29-ի նկատմամբ՝ 3.2%-ով, իսկ 2019թ. փետրվարի 28-ի նկատմամբ նվազելով 8.95%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 3,326.87 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 13.8%-ով, 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ՝ 32.4%-ով և 2019թ.փետրվարի 28-ի նկատմամբ՝ 36.5%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1014.34 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.3%-ով, 2020թ.փետրվարի 29-ի նկատմամբ՝ 31.2%-ով և 2019թ.փետրվարի 28-ի նկատմամբ՝ 46.7%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 264.38 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 9.99%-ով, 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ՝ 13.84%-ով, իսկ 2019թ.փետրվարի 28-ի նկատմամբ՝ նվազելով 1.78%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6,301.36 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 12.7%-ով, 2020թ.փետրվարի 29-ի նկատմամբ՝ 20.0%-ով և 2019թ.փետրվարի 28-ի նկատմամբ՝ 26.5%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 1,921.2 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.3%-ով, 2020թ.փետրվարի 29-ի նկատմամբ՝ 18.9%-ով և 2019թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 36.0%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 500.76 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 8.87%-ով, 2020թ.փետրվարի 29-ի նկատմամբ՝ 3.2%-ով, իսկ 2019թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ նվազելով 8.95%-ով:

ԱԺԲԳ







ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2021թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել է 4,627.62 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.81%-ով, իսկ 2020թ.փետրվարի 29-ի և 2019թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ աճելով համապատասխանաբար 8.54%-ով և 11.94%-ով:

2021թ. փետրվարի 28-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում `

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 77.43%, ինչը ավել է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.52 տոկոսային կետով, 1.93 տոկոսային կետով ավել է 2020թ. փետրվարի 29-ի ցուցանիշից և 0.38 տոկոսային կետով ավել է 2019թ. փետրվարի 28-ի ցուցանիշից,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 22.14%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 0.51 տոկոսային կետով, փետրվարի 29-ի համեմատությամբ պակաս է 1.89 տոկոսային կետով, իսկ 2019թ. փետրվարի 28-ի համեմատությամբ՝ պակաս է 0.27 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.43%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2020թ.փետրվարի 29-ի և 2019թ. փետրվարի 28-ի համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.01, 0.04 և 0.11 տոկոսային կետով:

2021թ. հունվար-փետրվարին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված `

1) տոկոսավճարները կազմել են 11.52 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.1 և 0.07 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 5.71 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 0.74 և 0.19 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 5.81 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 0.85 և 0.26 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին, մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2020թ. հունվար-փետրվարին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 371.33 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 344.48 և 356.46 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 7.96 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 30.31 և 12.26 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 363.4 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 374.79 և 368.72 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2021թ. հունվար-փետրվարին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 11.06 մլն. դոլար տոկոսավճար, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 20.96%-ով և 11.25%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 38.44 մլն դոլարի մայր գումար, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 7.57%-ով և 54.21%-ով,

3) ստացվել են 9.38 մլն. դոլարի վարկային միջոցներ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 19.48%-ով և 32.76%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 49.5 մլն. դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 0.5%-ով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 32.4%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման



2021թ. փետրվարի 28-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 969.6 մլրդ դրամ, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2020թ. փետրվարի 29-ի և 2019թ.փետրվարի 28-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 10.76, 253.38 և 361.98 մլրդ. դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3942 օր, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 3 օրով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի և 2019թ. փետրվարի 28-ի համեմատությամբ՝ ավել է համապատասխանաբար՝ 297 և 709 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2021թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել է 4.22%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, 2020թ. փետրվարի 29-ի և 2019թ. փետրվարի 28-ի համապատասխան ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար 0.06, 0.65 և 0.81 տոկոսային կետերով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2021թ. փետրվարի 28-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.01%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.204 տոկոսային կետով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի և 2019թ. փետրվարի 28-ի համեմատությամբ՝ մեծ է համապատասխանաբար՝ 0.29 և 0.14 տոկոսային կետերով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 6.56%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, 2020թ. փետրվարի 29-ի և 2019թ. փետրվարի 28-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.33, 0.62 և 1.23 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 92.43%, ինչը 2020թ . դեկտեմբերի 31-ի, 2020թ. փետրվարի 29-ի և 2019թ. փետրվարի 28-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 0.54, 0.34 և 1.09 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021-2023 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (փետրվար ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2021-2023թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2021թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել 8.79 տարի: Այս ցուցանիշը 2020թ. փետրվարի 29-ի դրությամբ արձանագրված ցուցանիշներից պակաս է 0.21 տարով, իսկ 2019թ. ցուցանիշից ավել է 0.23 տարով,

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2021թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել է 9.27%, որը 2020թ. փետրվարի 29-ի և 2019թ. փետրվարի 28-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 5.08 և 2.86 տոկոսային կետերով,

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2021թ. փետրվարի 28-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 82.05%, լողացող տոկոսադրույքով՝ 17.95%: Ընդ որում, 2021թ. փետրվարի 28-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2020թ. փետրվարի 29-ի և 2019թ. փետրվարի 29-ի համապատասխան ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար՝ 1.84 և 2.92 տոկոսային կետերով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2021թ. փետրվարի 28-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 76.63%, ներքին պարտք՝ 23.37%: Այսինքն, ներքին պարտքի կշիռը 1.63%-ով փոքր է ուղենշային ցուցանիշից: Ընդ որում, 2021թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2020թ. փետրվարի 29-ի ցուցանիշին զիջում է 0.17 տոկոսային կետով, իսկ 2019թ. փետրվարի 28-ի համապատասխան ցուցանիշը գերազանցում է 1.27 տոկոսային կետով: